

Հրատարակութիւն՝
Հաճնոյ Հայրենակցական Միութեան
Լիբանան

Published by
The Hadjin Compatriotic Union, Lebanon

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան
ՀԱԾԸՆԻ ՈՐԲԱՆՈՑԸ (1919 - 1920)

**The Armenian General Benevolent Union
HADJIN ORPHANAGE (1919 - 1920)**

Ներածութիւն, թարգմանութիւն եւ ծանօթագրութիւն՝
Անդրանիկ Տազէսեան
Introduction, translation and annotation by
Antranik Dakessian

HAIGAZIAN UNIVERSITY PRESS
Beirut 2020

Original Title:

**Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան
Հանրնի Որբանոցը (1919 - 1920)**

Ներածութիւն, ծանօթագրութիւն եւ թարգմանութիւն՝
Անդրանիկ Տազէտեան

**The Armenian General Benevolent Union
Hadjin Orphanage (1919 - 1920)**

Introduction, annotation and translation by
Antranik Dakessian

First Edition 2020

© Copyright 2020 HAIGAZIAN UNIVERSITY PRESS
Beirut, Lebanon

All rights reserved.

No part of this publication may be reproduced, stored in or introduced into a retrieval system, or transmitted, in any form, or by any means (electronic, mechanical, photocopying, recording, or otherwise) without the prior permission of the publisher.

www.haigazian.edu.lb

ISBN 978-9953-585-42-0



Հապորը լոյս կը տեսնէ մեկենասութեամբ
Տիար Կարապետ Պապահէքեանի,
իր ծնողաց՝
Տէօվլէթ եւ Էօժենի Պապահէքեաններու յիշատակին

The Volume is published through a gracious donation from
Garabed Babahekian
in memory of his parents,
Deuvlet and Eujenie Babahekians



Բովանդակություն Table of Contents

	Էջ / Page No.
Երկու խօսք	7
<i>A Few Words</i>	9
Լուսանկարներ	11
<i>Photos</i>	11
Որբանոցայիններու ծննդավայրի եւ արքայավայրի քարտեզ	11
<i>Map of the orphans' birthplaces and their exile locations</i>	11
Հաճնոյ հերոսամարտի դիրքերու քարտեզ	12
<i>Map of the Hadjin self-defense</i>	12
ՀԲԸՄի Հաճրնի Որբանոցը	17
<i>The AGBU Hadjin Orphanage</i>	45
ՀԲԸ Միութեան Հաճրնի Որբերը	69
<i>The AGBU Hadjin Orphans</i>	69
Այբբէնական ցանկ ՀԲԸՄ Հաճրնի որբանոցայիններու	283
<i>Alphabetical list of the AGBU Hadjin orphans</i>	286

Երկու Խօսք

Առաջին Համաշխարհային Պատերազմի ավարտին, Թուրքիոյ պարտութեամբ սկսաւ հայ գաղթականներու վերադարձը հայրենիք՝ Արեւմտահայաստան եւ Կիլիկիա: Արաբական անապատներուն մէջ հայասպանութեամբ տասանորդուած հայութիւնը վերադարձաւ պապենական ծննդավայր՝ Կիլիկիոյ կանգնելու իր անցեալին եւ կերտելու նոր ապագայ՝ հայկական պետականութեան երազով:

Փրկուած հաճրնցիներուն մեծամասնութիւնը վերադարձաւ՝ վերսկսելու ցեղասպանութեամբ ընդհատուած իր կեանքը:

Հայկական խլեակներու փրկութեան նոր պայմաններու յառաջացումը ուրիշ թափ հաղորդեց ՀԲԸՄ իրութեան, որ նոր լիցքով փարեցաւ հայ որբերու փրկութեան եւ անոնց վերընթացումին առաքելութեան: Իր այս ճիգին մէջ ան Դամասկոսի իր որբանոց-հիւանդանոցը տեղափոխեց Հաճրն, աւելի եւս ուժականութիւն հաղորդելու վերականգնող քաղաքին:

Սակայն, կարճատեւ խաղաղ կեանքէ մը ետք, Հաճրն պաշարուեցաւ եւ ութամսեայ ճակատամարտէ ետք, բնաւական զօրքերը գրաւեցին Հաճրնը, խողխողեցին քաղաքին բնակչութիւնը, նաեւ՝ Միութեան որբանոցին սաները:

Հայ ընթերցողին կը յանչնենք այդ որբանոցին ողիսականը, որ ողիսականն է նոյնիսքն Հաճրնին, պապենական մեր բոլոր քաղաքներուն, ասաններուն եւ գիւղերուն ու անոնց հայ բնակչութեան: Մարտանին մէջ քանի՜-քանի՜ կեանքեր, յոյսերով եւ երազներով աչքեր կը զրուցեն իրենց չտեսած վաղուան օրերուն մասին...:

Հաճույ հերոսամարտի հարիւրամեակի միջոցառումներուն շարքին, հրատարակելով այս մատենար, Հաճույ Հայրենակցական Միութիւնը յանուն պապենական Հաճրնին եւ համայն հաճրնցիութեան, իր

խորին երախտագիտությունը կը յայտնէ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության՝ պապենական Հաճրնին հանդէպ անոր ունեցած սիրոյն, աջակցութեան եւ անփոխարինելի նպաստին համար: Վարչութիւնս շնորհակալութիւն կը յայտնէ նաեւ ՀԲԸՄ Գահիրէի Յանչնաժողովին՝ ՀԲԸՄ Հաճրնի Որբանոցի տոմարին հրապարակութիւնը արտօնելուն:

Մեր մաղթանքն է որ այս հատորով նորահաս մեր սերունդները աւելի եւս զօդուին հայութեան պայծառ քեալականին, աւելի եւս փարին հայ ժողովուրդի մարդկային առաքելութեան, սաքարեն մարդկութեան բարօր եւ ազնիւ վերելքին...

Փառք բոլոր անոնց, որոնք ինկան ու չելա՛ն ուրբի, անոնց՝ որոնք հերոսամարտ մղեցին: Եւ փառք՝ վերապրող հայ ժողովուրդին, որ արինով ու զէնքով կերպեց իր ազատութիւնը եւ անկախութիւնը:

**Հաճնոյ Հայրենակցական Միութիւն
Պէյրութ**

A Few Words

No sooner had Turkey lost WWI than the Armenian refugees started returning to their fatherland, Western Armenia and Cilicia. They, decimated by Armenocide, returned from the Arab deserts to their birthplace to embrace its past and fulfill the dream of Armenian statehood.

Most of the surviving Hadjentsis returned home, too, to restart their lives, which had been disrupted by the Genocide.

The end of WWI opened up new opportunities for the liberation of the surviving Armenians, and gave new impetus to the Armenian General Benevolent Union's relief and support efforts. Indeed, the AGBU, with new dynamism, continued its mission of liberating orphans and raising them. In this context it transferred its Damascus orphanage-hospice to Hadjin, to further energize the city, which was being reborn.

Yet, after a short-lived peaceful period, Hadjin was besieged, and after eight months of battles, Kemalist forces occupied the city and butchered its population, including the AGBU orphans.

This volume is the odyssey of both the orphanage and Hadjin. It reflects the odysseys of all our homeland cities, towns and villages and their native inhabitants. The photos and portraits in this book narrate stories of hopes and dreams of tomorrows that never came....


By this token, and on the occasion of the 100th anniversary of the heroic resistance of Hadjin, on behalf of Hadjin and Hadjentsis worldwide, the Hadjin Compatriotic Union expresses its deep gratitude to the AGBU for the love, support and far-reaching relief it offered to Hadjin. Likewise,

the Union expresses its gratitude to the AGBU Cairo Chapter Central Committee for allowing the publication of this document, preserved in its archives.

We hope this volume further binds our new generations to the bright vision of our nation and its human mission of elevating humankind and making the world a better place for all.

Glory to all those who fell and could not stand up again, to all those who fought a heroic war of resistance, and glory to the reborn Armenian nation, which shaped its freedom and independence with overwhelming sacrifice.



Hadjin Compatriotic Union
Beirut



Որբանոցայիններու ծննդավայրի եւ արքայավայրի բարդէս (վերամշակուած ANI հիմնարկի բարդէսէն)
 Modified map of the orphans' birthplaces and their exile locations (original copyright: ANI)



ՀԲԸՄ Հաճրնի որբանոցայիններ, նկարուած որբանոցին պարիսն
A group of the AGBU Hadjin orphans photographed in front of the orphanage



Նամակ՝ ՀԲԸՄ ԿԿԺԷՆ, որով կը հաղորդուի Դամասկոսի որբանոց-հիւանդանոցին փոխադրումը Հաճրն

A letter from the AGBU CAB stating its Damascus orphanage-hospice has been relocated to Hadjin

Պետրոս Եսյս. Սարաճեանի նամակը՝ ՀԲԸՄ Կիլիկիոյ կրթական վերապետուչ Միքայէլ Նաթանեանին, որբանոցին և հիւանդանոցին վիճակին մասին

Bishop Bedros Saradjian's letter updating Mikayel Natanian, the AGBU educational supervisor in Cilicia, about the status of the AGBU Hadjin orphanage and hospice

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՃԸՆԻ ՈՐԲԱՆՈՅԸ

Սիրուն Հաճընը իր պատմությունները եւ
ուրթամենայ հերոսամարտով
անջնջելի թեպէյուկ (աւանդ) մըն է:
Աղայլօ (յումպէյու) պէտք չէ՛ երթայ:

Զինադադար, Որբահաւաք, Տունդարձ եւ Կազմակերպում

Դաշնակիցներու արեւելեան Միջերկրականի ազատագրումով¹, արաբական արեւելքի անապատային եւ ներքին այլ շրջաններէ, փասանորդուած հայ փարագիրներու փունդարչի նախասկիզբը կը դրուի²: Կարճ ժամանակ ետք, 11 Նոյեմբեր 1918ին, Ա. Համաշխարհայինի Ձինադադարը³ նոր յոյսեր կը ներշնչէ հայրենադարչի: Դաշնակից ուժերը կը հասնին Կիլիկիոյ սահմաններուն, սակայն միայն 1919ի սկիզբները ֆրանսացիք կը գրաւեն Արանան ու Սիւր⁴: Ասով ազդանշանը կը փրուի զանգուածային վերադարչին,

¹ 5 Յունիս 1916ին հռչակուել էր արաբ ըմբոստութիւնը՝ Օսմանեան Կայսրութեան դէմ: Դաշնակից զօրքեր Դամասկոս կը մտնեն 30 Սեպտեմբեր 1918ին, ֆրանսացի ծովայիններ Պէյրութ ցամաք կ'ելլեն 7, իսկ բրիտանացիք՝ 8 Հոկտեմբերին, հայ կամաւորներ Պէյրութ կը մտնեն Նոյեմբերի սկիզբը: Արաբ ուժեր Դամասկոս կը մտնեն 1 Հոկտեմբեր 1918ին, Հոմսը կը գրաւուի 11, Համան՝ 17, Հալէպը՝ 29 Հոկտեմբերին (Pierre Rondot, *Cahiers de L'Afrique et de L'Asie, [Vol.] IV, Les Chrétiens d'Orient, J. Peyrennot & Cie, Editeurs, Paris, 1955, էջ 276. նաեւ՝ Stephen Longrigg, Syria and Lebanon Under French Mandate, Beirut, Oxford University Press/Lebanon Bookshop, 2nd ed., 1968, էջ 63, 65. նաեւ՝ Սարգիս Թորոսեան, Դարդանէլից Մինչեւ Պաղեստին, անգլ. թարգմ.՝ Լիլիթ Թութսալեան, հրատ.՝ ՀՀԳԱԱ Յեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտ, Երեւան, 2012):*

² Օրինակ, տարագիրներու Յորդանանէն տունդարձը կը սկսի 10 Նոյեմբեր 1918ին:

³ Մուտրոսի պայմանագիրը կնքուել էր 30 Հոկտեմբեր 1918ին: Ուշագրաւ է որ Դաշնակիցները Իսթանպուլը կը գրաւեն Մարտ 1920ին:

⁴ 1918ի աւարտին կը գրաւուին Անտիօք-Ալեքսանտրէթը. Այնթապ-Քիլիսը՝ 24 Դեկտեմբերին, Մարաշը՝ Փետրուար, Ուրֆան՝ Մարտ 1919ին:

մանաւանդ աջակցութեամբը հայկական կազմակերպութիւններու, առաւել եւս՝ գրաւող իշխանութեանց բաղաբաղանի եւ նիւթաբարոյական աջակցութեամբ: Պէյրութ եւ Հալէպ կը դառնան վերադարձի գլխաւոր կամրջագլուխներ⁵:

ՀԲԸՄ Գահիրէի ղեկավարութիւնը, որ արդէն փորձառութիւնը ունէր Փոր Սալիպի մուսալեռցիներու գաղթակայանի մէկ բաժինը վարելու, կը դիտարկէ հայ աքսորեալներու, առեւանգեալներու, որբերու մահուան ճիրաններէն ազատագրումին եւ ապաստարաններու, ապահով գաղթակայաններու մէջ հաւաքումին հրապարակութիւնը: Ասիկա քայլ մը կ'ըլլայ արմատախլում-աքսորէն՝ խլեակներուն ճակատագիրը բարեփոխելու աշխատանքի կազմակերպումին, որուն կը յաջորդեն ապահովումը, միջոցներու հայթայթումն ու տեղական եւ գրաւող իշխանութեանց հետ համադրումը անոնց վերադարձին՝ պապենական ծննդավայրեր, մանաւանդ՝ Կիլիկիա, յանուն սեփական կիլիկեան հայկական պետութեան գոյացման երազին:

Այդ ծիրին մէջ, Հոկտեմբեր 1918ի սկիզբը, առաւել եւս կազմակերպելու համար Փոր Սալիպի գաղթավայրի կրթական առօրեան, ՀԲԸՄ Կեդրոնական Վարչական Ժողովը (ԿՎԺ) կը կազմէ Կրթական եւ Որբախնամ Յանձնախումբը (ԿՈՅ)⁶, որուն կը յանձնարարէ վարել ՀԲԸՄ Փոր Սալիպի գաղթավայրի «Միտուան» վարժարանն ու որբանոցը, ուր կը գտնուէին 2200 երկու որբեր եւ աշակերպներ:

Հոկտեմբերի կէսերուն, Հայ Ազգային Միութեան (ՀԱՄ), Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի եւ ԿՈՅի դիւաններուն միջեւ, Գահիրէի մէջ կը գումարուի ժողով մը՝ «նպատակ ունենալով նոր ազատագրուած շրջաններու հայ տարագրեալներու օգնութեան գործը լրջօրէն կազմակերպելու մասին համախոհութիւն

⁵ Յունուար 1919ին, վերադարձողներ կ'ըլլան Կիլիկիոյ արեւելեան եւ հարաւային ծայրամասեր: 8 Յունիս-15 Յուլիս 1919 շրջանին անլի քան 3000 տարագիրներ կը վերդարձան Պէյրութի վրայով (Անդրանիկ Տագետեան, «Երկու Փաստաթուղթ Լիբանահայ Կեանքէն. Ա.- Էջ Մը Պէյրութի 1918-20ի Հայկական Պատմութեան, Բ.- Լիբանահայութիւնը 1930ականներու Սկիզբին», Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԸ., 2018, էջ 705-730):

⁶ Յանձնախումբը կը նախագահէր Եգիպտոսի առաջնորդ Թորգոմ Եպս. Գուշակեան, անդամներ էին՝ Նազարէթ Աղազարմ, Լեւոն Ասատուր, Արտաշէս Հիւրմուզ, Արմենակ Մալումեան, Օր. Ս. Մանիսպեան, Արտաշէս Նետուրեան, Տոքթ. Մ. Շամլեան, Ճանիկ Չաքըր, Տոքթ. Պ. Սերովբեան, Տիկ. Յ. Սէթեան եւ Առաքել Փափագեան: ԿՈՅի առաջին նիստը կը գումարուի 18 Հոկտեմբեր 1918ին:

կացայնել»։ Ապարդիւն այս փորձէն ետք, ԿՎԺՆ 1 Յունուար 1919էն «անկախօրէն» (ԿՈՅԻ միջոցաւ) կը շարունակէ գործել, եւ վերամշակելով իր որբախնամի առաքելութիւնը, ՀԲԸՄ Կիլիկիոյ եւ Սուրիոյ քննիչ-պատուիրակ՝ Միքայէլ Նաթանեանի ջանքերով կը մէկտեղէ 162 որբեր ու կը վերաբանայ ՀԲԸՄ Տէօրթ Եոլի Քելէկեան որբանոցը՝ Օգոստոս 1919ին։ Որբանոցին խնամակալութիւնը կը վստահուի ԿՈՅԻն, որ ստանձնած էր արդէն ՀԲԸՄ Դամասկոսի եւ Մերսինի որբանոցներուն խնամակալութիւնը։

Վերադարձ. Նաեւ՝ Հաճրն

Որբերու, կարիքաւորներու, այրիներու եւ կարողագուրկներու ազատագրում-վերադարձը ապահովելու աշխատանքէն անկախ, գաղթականներու զանգուած մը, արդէն իսկ սկսեր էր փարեռայնօրէն վերադառնալ պապենական ծննդավայր։

25 Մարտ 1919ին կ'արձանագրուի հաճրնցիներու առաջին վերամուտը իրենց ծննդավայր, շուրջ չորսուկէս փարիներու բացակայութենէ ետք⁷։ Վերադարձողները - շուրջ 300 ընտանիք - կը փրկաւորուին Ս. Յակոբայ վանքը եւ դպրոցը։ Անոնք Հաճրնի մէջ կը գտնեն 850-1000ի մօտ հայ ծեր կիներ, հաշմանդամներ, կոյրեր, մանուկներ, բանակին մէջ գտնուող հայերու ընտանիքներ, թուրք գաղթականներ, իսկ քաղաքը կը նմանէր ամփիթատարոնի՝ աւերակուած, «մոխրակոյր դարձած» կեդրոնաշրջան մը, շրջապատուած կիսաւեր փուներով, մինչ թրքաց թաղը կանգուն կը մնար. Հաճնոյ 4500 փուներէն միայն 500ը կանգուն էր⁸։ Մայիսին՝ Թուրքիոյ մէջ միայն չիով հասանելի միսիոնարական միակ կայանը՝ Հաճրն, ժամանած միսիոնար Ալիս Քիսի Քլարք կը գրէ. «մարդ կրնայ գրեթէ երեւակայել որ ասիկա Պոմպէյն է... քաղաքին մէջ գնուելիք բան չէր մնացած ...քաղաքը մաքրուած էր այնպէս՝ ինչպէս ազուար պիտի մաքրէր... իսկ

⁷ 3 Յունիս 1915ին արձակուած էր Հաճնոյ տեղահանութեան հրամանը (Յարութիւն Գէորգեան, «Հաճրնի Տեղահանութիւնները 1915ին», Հաճնոյ Հերոսամարտի 90ամեակի Գիտաժողովի Նիւթեր Եւ Վաւերագրեր Ու Լուսանկարներ, կազմ. եւ խմբ.՝ Անդրանիկ Տազէտեան, Պէյրութ, Հայկագեան Համալսարանի Հրատ., 2013, էջ 17-36)։

⁸ Ալիս Քիսի Քլարք, *Նամակներ Կիլիկիայէն (Օրագրութիւն)*, թրգմ., ծնթ.՝ Անդրանիկ Տազէտեան, Հրատ.՝ Հաճնոյ Հայրենակցական Միութեան Լիբանան, Հայկագեան Համալսարանի Հրատ., Պէյրութ, 2020 [մամուլի տակ]։ Հաճրնի տուները 15 Սեպտեմբեր 1915ին թուրք կառավարութեան դիտումնաւոր ջանքերով հրդեհուած-քանդուած էին («Հաճնոյ Ինքնապաշտպանութիւնը», *Նիւթեր ՀՅԴաշնակցութեան Պատմութեան Համար*, Հրտ. Ա., Պէյրութ, Տպ. Համազգային, 1972, էջ 285)։

ժողովուրդը սարսափելի վիճակի մէջ է»: Անհրաժեշտ կարիքներ էին հաց, զգեստ, անկողին, փուն, դպրոց, հիւանդանոց: Արհեստավորներ չեն կրնար աշխատանքի լծուիլ՝ գործիքներու չգոյութեան պատճառով:

Մայիս 28ին կը նշուի Հայաստանի Հանրապետութեան հռչակման առաջին փարեդարչը, այդ առթիւ Սահակ Մեսրոպեան դպրոցաշէնքը կը զարդարուի եռագոյններով⁹:

Հաճրնի վերահայացումով մօտակայ գիւղեր եւ այլ փեղեր թաքնուած Հաճրնի եւ շրջակայ հայագիւղերու որբեր կ'ապաստանին Հաճրն՝ բարդացնելով ուրեստի եւ ընկերաբարեգործական փազնապար: Կը բարդանայ նաեւ բնակութեան խնդիրը. Մայիսին, միջին հաշուով, իւրաքանչիւր փան մէջ բաւան հոգի կը բնակէր, ներառեալ՝ մանուկներ, մինչ Յուլիսի սկիզբները քաղաքին բնակչութեան թիւը հասեր էր 6000ի (շրջակայ թրքութեան 60,000ին դիմաց)¹⁰: Երկրագործական աշխատանքներու լծուելով՝ չմտան մթերք ապահովելու ժամանակը անցեր էր արդէն, թուրքերը աւերեր էին գրեթէ բոլոր այգիները, եւ թէեւ 1919ին Հաճնոյ փասանորդը ամբողջութեամբ աքտորէն վերադարձողներուն յապկացնել որոշուած էր, անոր մէկ մասը միայն կը փոխադրուի Հաճրն, որով սննդատրման եւ պարսպարման փազնապար առաւել կը սրի¹¹: Առարկելով թէ «մինչ ակնկալելի էր որ ժամանակի ընթացքին Հաճրն բնակիլը աւելի կարելիութիւն պիտի դառնար, կարծես թէ հակառակը կ'ըլլայ ...այնքան աղփոտութիւն կայ եւ այնքան մարդիկ առնէպններու պէս կ'ապրին...»՝ Քլարք կը մեղադրէ ֆրանսական իշխանութիւնները:

Հոկտեմբերին ընտանեօք Հաճրն կը հասնի պարուելի Յարութիւն խաչապուրեան: Կու գան նաեւ հայ կամավորներ¹², որոնք կը բնակեցուին հինգ-յարկանի Սահակ Մեսրոպեան Վարժարանի յարկերէն մէկուն մէջ: 1919 Դեկտեմբերի վերջը Հաճրն կու գայ ինքնապաշտպանութեան յեղափոխական հրամանապար,

⁹ Մեսրոպ Շիրտըմեան, *Մոռցուած Դէպքեր եւ Դէմքեր Հաճնոյ 1920ի Հերոսամարտէն*, Նիկոսիա - [Պէլրոպ], Տպ. Արագ, 1974, էջ 8, 19:
¹⁰ Շիրտըմեան, էջ 16: Ըստ Քլարքի՝ Հաճրնի եւ շրջակայից գիւղերու հայութեան աւելի մեծ տոկոս մը կը վերադառնայ, բաղդատմամբ այլ շրջաններու:
¹¹ Շիրտըմեան, էջ 14. նաեւ՝ *Միութիւն*, Մայիս-Յունիս 1919, էջ 38:
¹² Ալիլիկէ Թաթոպեան, *Յուշեր Դիւզգանական Կեանքէ Մը (1915-1920)*, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց, Անթիլիաս-Լիբանան, 1953, էջ 50: Խումբ մը կու գայ Յուլիս 1919ին, իսկ ուրիշ մը՝ աւելի ետք, ընդհանուր թիւը հասցնելով 30ի: Սակայն կամավորներէն մաս մը կը լքէ Հաճրնը (Շիրտըմեան, էջ 10, 26):

Անդրանիկի զինուոր, Կովկասի մէջ վաշտապետ, կեսարացի Սարգիս Ճեպէճեան:

Կեանքի Վերընձիւումը Հաճրնի Մէջ, Հաճնոյ Որբանոցները եւ ՀԲԸՄ Որբանոցը

Հակառակ ներքին այս դժուարութեանց, հաճրնցիք կը լծուին վերականգնումի աշխատանքին. Մարտ 29ին կը կազմուի Հայ Ազգային Միութիւնը, 30ին՝ Հաճրնի Օգնութեան Յանձնախումբը, Ապրիլ 2ին՝ Հաշտարար Դատարանը, կառավարական պաշտօնէութեան մէկ մասը կը փոխարինուի հայերով¹³: Ապրիլ 27ին Հաճնոյ թուրք քայմաքամը կը փոխարինուի Արմենակ Բիրէճեանով, որ գործին կ'անցնի Մայիս 7ին: Մայիս 22ին վանք բնակեցուած հաճրնցիք կ'անցնին իրենց կիսանորոգուած տուները, մինչ վանքէն հատուածներ կ'ենթարկուին երկամետայ նորոգման՝ առ ի պատրաստութիւն Հաճրն գալիք ՀԲԸՄ Դամասկոսի որբանոցին ու որբերուն ընդունման¹⁴: 15 Յունիս 1919ին Կիլիկիոյ գրաման ուժերու վերին հրամանատար զօրավար Մաճ¹⁵, իսկ 8 Օգոստոս 1919ին գնդապետ Նորման կ'այցելեն Հաճրն՝ սահմանները քննելու յառաջադրութեամբ¹⁶: 19 Սեպտեմբեր 1919ին սգահանդէս կը սարքուի Հաճրնի նահապետներուն յիշատակին: Նոյն օրը հաճրնցիք կը դիտեն տեղական ֆութպոլի խաղ մը, աշխուժ գործունէութիւն կը ծաւալէ Երիտասարդաց Երկսեռ Միութիւնը. ան կը պատրաստուի ներկայացում տալու, որուն հասոյթով՝ կօշիկ բաժնելու յառաջապահ դիրքապահներուն: 6 Սեպտեմբերին ֆրանսական կառավարութեան Սիսի զինուորական կառավարիչ Զօր. Թայարտա եւ գնդապետ Փիէփաի (քաղաքային վարչութեան պետ) եռօրեայ այցելութիւն կու տան Հաճրն¹⁷, 1 Նոյեմբեր 1919ին բրիտանացիք ֆրանսացիներուն կը յանձնեն զինուորաքաղաքական վերահսկողութիւնը Կիլիկիոյ, որ ըստ Սայքս-Փիքօ Համաշայխութեան կ'իյնար ֆրանսական ազդեցութեան գօտիին մէջ¹⁸, մինչ 1920 Յունուարին՝ Թայարտայի օգնական Սուպի, Հաճրն

¹³ Շիրազմեան, էջ 8, 19:

¹⁴ Որբանոցին խոհանոցը, փուռը, արտաքնոցն ու բաղնիքը «գրեթէ ի նորոյ» կը շինուին, իսկ Դեկտեմբերին կ'անցնին գրասեղաններու շինութեան:

¹⁵ Զօրավար Մաճ, Հաճրն գալով 17 հոգինց զինուորական խումբով, կը յայտարարէ. «Հաճրնը էապէս գրաւուած է» (Քլարք):

¹⁶ Սոկրատ Յ. Թերզեան, Հաճրնի Ութամետայ Դիւցազնամարտը, Բ. տիպ, Պուենոս Այրէս, Տպ. Արարատ, 1956, էջ 196:

¹⁷ Նոյն, էջ 200:

¹⁸ Longrigg, էջ 94: Սեպտեմբերէն արդէն գրաւեալ Կիլիկիան կը նկատուի Սուրիոյ մաս (Քլարք):

կր մնայ 3 օր¹⁹:

Փետրուար 19ին Հաճրն կր հասնի տեղակալ Կարապետ Չալեան, որ կր փոխարինէ Քիրէճեանը²⁰:

Հաճրնի մէջ կր սկսին գործել երեք որբանոցներ.-

- 1) Նիր Իսթ Բիլիֆի (ՆԻԲ) երկբաժին որբանոցը.- ա) տղոց որբանոցը կր գտնուէր Սուրբ Սարգիսի մէջ եւ կր գործէր առնուազն Յունիս 1919էն, բ) աղջկանց որբանոցը կր գտնուէր Քրպէտի մէջ: Բարբ իր գիրքին մէջ յարակօրէն չի նշեր որբանոցայիններուն թիւը. իր միբանի կողմնակի ակնարկութիւններէն կր հետեւցնենք, որ որբուհիներուն թիւը շուրջ 200 էր, իսկ որբերունը՝ առնուազն 60²¹: Միսիոնարները որոշ թիւով որբեր յանձնած էին իրենց Հաճրնի հարազատներուն, որոնց գումար կր վճարէին:
- 2) Մենոնայթներու որբանոցը.- լեռնային դիրքերէն բաղաբ նահանջելով, Ապրիլ 1920ի սկիզբը հաճրնցիք այս որբանոցի համալիրին շէնքերէն մին իբրեւ դարմանատուն կր գործածեն, ուստի եւ որբանոցայիններն ու պաշտօնէութիւնը կր տեղափոխուին Քրպէտ, բացի 20 որբերէ, որոնք կր միանան ՆԻԲի տղոց մասնաշէնքի որբերուն:
- 3) ՀԲԸՄ Որբանոցը.- 1919 Սեպտեմբերի վերջ-Նոկտեմբերի սկիզբ Հաճրն կր հասնին ՀԲԸՄ Դամասկոսի²²

¹⁹ Սուպի, ֆրանսական բանակին ծառայող մարտքցի զինուորական էր: Ինք է որ կը յայտնէ թէ Մարաշն ու Այնթապը Կիլիկիոյ մէջ ընդգրկուած են եւ ամբողջ շրջանը նշանակուած է Ֆրանսայի: Ըստ Քլարքի՝ ան հայերուն հանդէպ «հակադիր թուեցաւ»:

²⁰ Յակոբ Պողոսեան, Հաճրնի Ընդհանուր Պարմութիւնը եւ Շրջակայ Գօգան-Տաղի Հայ Գիւղերը, Լոս Անճելէս, Տպ. Պոզաճեան, 1942, էջ 630: Կարճ ժամանակ ետք ճամփաները փակուելով Չալեանի ընտանիքը չի կրնար գալ Հաճրն:

²¹ Ըստ յուշերու, Քրտէտի որբանոցը պատսպարուած էին 209 որբեր. Շխտըմեան անոնց ընդհանուր թիւը կը հասցնէ 400ի, Ուղուրեան՝ 210ի:

²² Դամասկոսի ապաստարանն ու դարմանատուն-դեղարանը «հիմնուած էին 16 Նոյեմբեր 1918ին ...նախածեռնութեամբ Բժշկական եւ Դեղագործական Միութեան եւ օժանդակութեամբ Կարմիր Էսաչի Տիկնանց»: Դարմանատունը նախապէս հաստատուած էր Դամասկոսի եկեղեցւոյ շրջափակին մէջ, սակայն գործի ծաւալումով, 14 Ապրիլ 1919ին կը փոխադրուի ՀԲԸՄ հիանդանոցին շէնքը, ուր կը շարունակէ գործել մինչեւ Հաճրն փոխադրումը՝ 14 Օգոստոս 1919: Հիանդանոցը սկսուած էր 10 անկողինով, ապա կարիքի յաւելմամբ՝ հասցուած 25ի: Հիանդանոցի ու դարմանատան գլխաւոր պաշտօնեաներն էին.- տնօրէն-բժիշկ Տոքթ. Խ. Գաբամաճեան (սիրայօժար) եւ օգնական՝ Տոքթ. Գառնիկ Քիրքճեան, դեղագործ-մատակարարն էր Հմայեակ Փափագեան: Հաստատութիւնը ունէր 3 հիանդապահուի եւ մէկական վիրափոխ, դեղագործի օգնական, դռնապան, խոհարարուի եւ օգնականուի: Մինչեւ տեղափոխումը, այնտեղ դարմանուած էին 4175 հիանդներ

66 որբանոցայինները, հիւանդանոցը եւ պաշտօնէութիւնը²³: Զոյգ հասարարութիւնները, ճամփայ ելած ըլլալով 21 Օգոստոսին, 5 Սեպտեմբերին հասցուած էին Տարսոն, ապա՝ Արանա եւ Սիւ: Արանայի եւ Սիւի մէջ կարաւանը կը հարկադրուի մնալ «բաւական օրեր»՝ հասարարութեան զանազան պիտոյքները ապահովելու, «մանաւանդ չմեռնային եղանակին համար կարելոր բանակութեամբ պաշար հայթայթելու համար»: 25 Սեպտեմբեր 1919ին որբանոցն ու հիւանդանոցը ճամփայ կ'ելլէն Սիւէն Հաճըն, իսկ Փափագեան²⁴ 15 օր եւս կը մնայ Սիւ՝ գոյքերու փոխադրութեան համար եւ կը յաջողի – բացի հիւանդանոցի դեղօրայքէն ու մահճակալներէն – մնացեալ գոյքերը փոխադրել կառավարութեան հաշուոյն. միւսներն ալ կը հասնին ամբողջութեամբ ամիս մը ետք²⁵: Սիւէն Հաճըն ճամփաները «յուժ վրանգաւոր» ըլլալուն՝ փոխադրութիւնը կը կարարուի նորիկաններու ընկերակցութեամբ²⁶:

(ներառեալ 32 վիրաբուժութիւն), մեծամասնութեամբ կանայք («Հ.Բ.Ը.Միութիւնը Երկրին Մէջ. Հ.Բ.Ը.Միութեան Դամասկոսի Հիւանդանոցը», *Միութիւն*, Յունտար-Փետրուար 1920, էջ 9): Յաւելեալ լուսաբանութիւններու համար տես՝ Vahram L. Shemmajian, “Armenian Genocide Survivors in Damascus at the End of World War I,” *Haigazian Armenological Review*, Vol. 40 (2020).

²³ Կը թուի թէ 1919 Յուլիսին արդէն իսկ որոշուած էր անոնց փոխադրումը Հաճըն: Հաճըն ժամանողներուն շարքին են բժիշկ Եսայի Կարապետեան, Հմայեակ Փափագեան եւ վեց հիւանդապահուիչներ (Թերզեան, էջ 202): Կարելի չեղաւ, առայժմ, պարզել ՀԲԸՄ Դամասկոսի որբանոցին սկզբնատրումին մանրամասնութիւնները: ՀԲԸՄ Գահիրէի արխիւին մէջ շատ քիչ բան գտանք որբանոցին մասին: «Հաճընի որբանոցն» վերնագրուած եւ 310 փաստաթուղթ ընդգրկող թիւ 41 տոմարը շատ քիչ բան կը պարունակէ Դամասկոս/Հաճընի որբանոցին մասին: Անկէ օգտուած ենք շարադրելու համար ԿՈՅԻ կազմութիւնն ու գործունէութիւնը: Այնկալելի է սակայն, որ ՀԲԸՄ արխիւներուն մէջ այս մասին եղած ըլլան այլ մանրամասնութիւններ: Կցկտուր եւ կողմնակի տուեալներ ու հատուկեւտ նամակներ կը հաւաստեն որ որբանոցին 66 որբանոցայինները «ճամփայ հանուած են դէպի Հաճըն», ուր Գեր. Սարաճեան եւ ՀԲԸՄ պատուիրակ Հմայեակ Ուղուրեան «պաշտօն ունին կազմակերպելու Միութեան երրորդ որբանոցը, 200 երկսեռ որբերով. ըստ այսմ, մնացեալ որբերը պիտի ընտրուին Հաճընի անձնող եւ անտիրական որբերուն մէջէն» (*Միութիւն*, Նոյ.-Դեկտ 1919, էջ 85):

²⁴ Որբանոցին տեղափոխութեան, վերանորոգումին, բանումին, ներքին կեանքին տուեալներուն մէկ մասը քաղած ենք Նաթանեանի ուղղուած Փափագեանի (9 Դեկտ. 1919, 16 Յունր. եւ 4 Փետր. 1920), Ուղուրեանի (17 եւ 30 Դեկտ. 1919), եւ Սարաճեան սրբազանի (30 Դեկտ. 1919) թուակիր նամակներէն, որոնք գտած ենք *Ջաղթօնքի* արխիւի Նաթանեանին վերաբերող թղթապանակին մէջ:

²⁵ «Հաճըն Նահատակ...», *Միութիւն*, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1920, էջ 87: ՀԲԸՄի մեծագոյն ձեռնարկն էր ասիկա Հաճընի մէջ: Միութիւնը 1909ի Կիլիկիոյ աղէտէն ետք Հաճընի մէջ բացած էր աշխատանոց մը, իսկ 1911ին ձեռնարկած արհեստանոցի մը հիմնումին, սակայն ծրագիրը տապալած էր՝ Պալքանեան Պատերազմին բռնկումով (Պօղոսեան, էջ 457):

²⁶ «Քաղաածք Քննիչ Տ. Հ. Ուղուրեանի Տեղեկագրէն», *Միութիւն*, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1920, էջ 91:

Որբանոցին համար ընտրուած էր Հաճընի հարաւ արեւմուտքը, քաղաքէն կէս ժամ հեռաւորութեամբ, 5000 ուրբ բարչրութեամբ Ս. Յակոբայ լեռան ստորոտը կառուցուած Ս. Յակոբայ վանքի նախկին որբանոցը, իսկ հիւանդանոցին համար՝ միախոնարներուն Քրտէպի աղջկանց վարժարանին շէնքերէն մին: Երկուքն ալ բաւարար չափով կը վերանորոգուին՝ ԿՎԺի 1700 Ե.Ո. յարկացումով²⁷: Սեպտեմբեր 26ին որբանոց կ'ընդգրկուին Ազիզիէն բերուած 50 որբեր²⁸: Հաճընի նախկին առաջնորդ Պետրոս Եպս. Սարաճեան եւ Հմայեակ Ողորդեան Հաճըն կը հասնին Դեկտեմբեր 1ին²⁹: Դասաւանդութիւնները կը սկսին Դեկտեմբերի սկիզբը եւ որբանոցը կը գործէ 190 որբով, մինչ Պոլսոյ խնամապարտութիւնը որբանոցին կը նուիրէ դասագիրքերը: Լեւոն Փապիազեան ամուր, Գէորգ Պաղպոյեան (Պաղպօ), երեք վարժուհիներ.- Նարդուհի (խարբերոցի), Աննա Պերպէրեան եւ Ակիլինէ Խանճեան (հաճընցիներ), մաքաւարար (Յակոբ Պաղպուտարեան), մարանապետ մը, երեք գիշերապահ (2 ներքին, 1 արտաքին), երկու խոհարարուհի, մէկ սեղանապետ, մէկ կարկերան - «ամէնն ալ շար համեստ ամսաթոշակով» - կը գոյացնեն որբանոցին պաշտօնէութիւնը³⁰: Իրենց կ'օգնեն շուրջ 15 որբանոցայիններ, որոնք փարիքով մեծեր են եւ որոնք «թէ՛ մանր մունր գործեր կը կատարեն եւ թէ՛ կ'ուսանին ու կը պատասխարուին»:

Որբանոցի եւ հիւանդանոցի գործերը կարգադրուած էին. չմտան պաշարը, գրենական պիպոյքը, փայտ եւ ածուխ ըստ կարիքի հոգացուած, հիւանդանոց-որբանոցի բնակչութեան «հագուստ ու կապուստ»ը զիրենք լաւ կը պաշարպանէին լեռներու վրայ թառող շինին դէմ, ու որբերու առողջական վիճակը՝ «լաւագոյն» էր. Թալարպայի՝ Հաճըն այցելութեան ատեն որբանոցին խոստացած ամսական 1600 թրքական ոսկին արդէն իսկ ստացուած էր, եւ կ'ակնկալուէր որ ան կարգադրութիւններ ընէր՝ հիւանդանոցին յարկացումի համար: Կիրակի, 14 Դեկտեմբերին, որբանոցին եւ հիւանդանոցին պաշտօնական բացման ներկայ կը գտնուին Արմենակ Քիրէճեան ամուր, ամերիկեան որբանոցի պատասխանատուներ՝ Միս Բոլոյ եւ Իպի ամուր,

²⁷ Միութիւն, Սեպտ.-Հոկտ. 1919, էջ 33, 73 եւ՝ Յունր.-Փետր. 1920, էջ 85:
²⁸ Ազիզիէն = պատմական Ծամողմը, կը գտնուէր Հաճընէն 18 ժամ հիւսիս, Սեբաստիա/Սվազ նահանգը:
²⁹ Ողորդեան Հաճըն կը մնայ մինչեւ 20 Յունուար 1920 («Քաղոածք, էջ 92):
³⁰ Գործակատար՝ Յովսէփ Քէօսէեան, հիւանդանոցին մատակարարը՝ Յակոբոս Սեքսէնեան (Թաթուլեան, էջ 51):

պատուելի խաչապուրեան, ոստիկանութեան հրամանատար Յովհաննէս Ժամկոչեան, ՀԲԸՄ պատուոյ անդամ Յ. Գրգեաշարեան: Որբերը կ'արտասանեն ու կ'երգեն «խինդ ու ինծիդ ճառագայթելով ներկայներու դէմքին»: Խօսք կ'առնեն Սարաձեան արքազան, Պար. խաչապուրեան, Մարթր Իպի եւ Ուղուրեան³¹:

Նոր Տարուան առթիւ որբերը իրենց կաղանդչէքերը կը սրանան՝ «Ճոխ մրգեղէններու, նարինջի ու կարկանդակի տեսակներով», մինչ շար մը մարդիկ քարայրներուն եւ փոսերու մէջ կը բնակէին, իսկ բնակչութիւնը հասած էր 7000ի: Որբերը «անբաժան մասը ... [կը դառնան] Հաճընի ընկերամշակութային կեանքին: Անոնց կողմէ խմբովին հնչեցուած ազգային երգերը ... կատարած փողանցքներն ու ներկայացուցած թատերերգութիւնները նոր փայլք [կու տան] Հաճընի մէջ վերապին ծայր առած հայկական կեանքին»³²: Աւելի ետք, որբերու չափահասները «արհաբար» կը մասնակցին ինքնապաշտպանութեան կռիւին, եւ մեծ ծառայութիւն կը մատուցեն իբրեւ սուրհանդակ կամ պարէն եւ ուզմամբերք փոխադրողներ³³, որբանոցի ուսուցիչներէն Պաղտոյեան կը մարզէ չափահաս որբերը, կը սորվեցնէ դրօշակի գաղտնալեզու: Յիրաւի, Հաճընի ՀԲԸՄի հասարակութիւնները «կը լրացնեն խիստ էական պակասներ», քաղաքին համար օրհնութիւն մը կը դառնայ հիւանդանոցը, ուր «շարունակ 10-15 հիւանդ կը բուժուէր»: Ըստ Սարաձեանի՝ «շարեր մեռած պիտի ըլլային եթէ այս հասարակութիւնը չըլլար»³⁴:

29 Յունուար 1920ին կը կատարուի Հաճոյ աւանդական ջրօրհնէքը, Մարտին կը խմբագրուի Նոր Հաճըն թերթի առաջին թիւը, բայց Թայարթա չ'արտօներ անոր տպագրումը: Հաճընի վերաշինութեան հանդէպ խանդավառութիւնը կ'աճի. Պուենոս Այրէսէն Ազնիւ Տարեան, ՀԲԸՄին կը կրակէ իր ունեցումը,

³¹ «Հ.Բ.Ը. Միութիւնը Կիլիկիոյ Մէջ. Հաճընի Որբանոցին եւ Հիւանդանոցին Բացումը», *Միութիւն*, Նոյ.-Դեկտ. 1919, էջ 93:

³² Վահէ Թաշճեան, «Դամասկոսէն Հաճըն Վերադարձի, Վերականգնումի Ու Նահատակութեան Ուղին (1919-1921)», *Հաճոյ Հերոսամարտի*, էջ 57. նաեւ՝ «Քաղոածք», էջ 91:

³³ Որբանոցի տասնեակ մը որբերու յանձնուած էր թոռցիկ-սուրհանդակի պաշտօնը՝ Ճեպէճեանի կողմէ: Անոնք մինչեւ 500 փամփուշտ կը փոխադրէին: Որբանոցայիններէն Քիլահճեան իբրեւ սուրհանդակ կը նահատակուի դիմադրութեան չորրորդ ամիսը, Քանլը Փագարի մէջ, իսկ Աւետիս Երէցեան՝ Կեիկի մէջ (Թերզեան, էջ 28, 306. նաեւ՝ *Գործապատում Հայկական Բարեգործ. Ընդհ. Միութեան* (Դ. Յաւերած), Գահիրէ, 7 Յունուար 1921, էջ 3):

³⁴ «Քաղոածք», էջ 91:

որպէսզի յեւրմահու վարժարան մը կառուցուի Հաճնոյ մէջ, ի յիշատակ իր նահապտակ ամուսինին՝ Տէօվլէթ Տապրեանի³⁵: Հաճընի մէջ, եօթ ամիսներու ընթացքին կ'արշահագրուին աւելի քան 100 ամուսնութիւն եւ 200է աւելի ծնունդ:

Նկարի առնելով մեծաթիւ անպապապար որբերու ներկայութիւնը, ԿՎԺն կ'որոշէ ընդարշակել իր առաքելութիւնը եւ յաւելեալ շէնք մը կառուցել՝ հասարակելու համար ՀԲԸՄ չորրորդ որբանոցը, ուր պիտի ընդունուէին Հաճընի, Սիսի, Վահկայի եւ Կարս Պազարի «անպիրական ու հէք որբերը»³⁶: Յունուար-Փետրուար 1920ին, ԿՎԺն 9000 Օսմ. ոսկիի վարկ մը կը բուխարկէ «Հաճընի եւ Տէօրթ-Եոլի մէջ անմիջապէս մասնատր շէնքերու կառուցման շեռնարկելու»³⁷, Մերսինի մասնաճիւղին միջոցաւ Հաճըն կը փութացուին

³⁵ «Հայկ. Բարեգ. Ընդի. Միութեան Կեանքն ու Գործը. Միութիւնը Երեք Որբանոց Եւ Կը Բանայ», *Միութիւն*, Յունր.-Փետր. 1920, էջ 2:

³⁶ Նոյն: Ատենապետութեամբ Լեւոն Ասատուրի, ԿՈՅը քննելով իր խնամակալութեան տակ գտնուող որբանոցներուն վիճակը, անհրաժեշտ կը տեսնէ 14 եւ աւելի մեծ տարիքի որբերը մէկտեղել գատ որբանոցի մը մէջ: Անոնց թիւը «արիւմարիւն» չէր. Մերսինի որբանոցը կը հաշուէր 85, Տէօրթ Եոլի՝ 53, իսկ Հաճընի՝ 58 որբեր: Յանձնախումբը 24 Դեկտեմբեր 1919 թուակիրով ԿՎԺի ատենադպիր Վահան Մալեգեանին կը յայտնէ թէ վերոյիշեալները «հակառակ որ անյարմար նկատուած են որբանոցի կեանքին, որբանոց ընդունուած են պարզապէս դատարկապորտ եւ անտիրական վիճակի մէջ չձգելու համար փողոցները եւ իրական կորուստէ մը զանոնք խնայելու մտահոգութեամբ»: ԿՈՅը անոնց ներկայութիւնը որբանոցներուն մէջ «օգտակար» չի նկատեր, եւ կ'առաջարկէ - զանց ընելով որբուհիները - անոնց համար «յարմար կեդրոնի մը մէջ կազմակերպել յատուկ հաստատութիւն մը, ...ուր անոնք պիտի կրնան պատսպարուիլ եւ ստանալ սահմանափակ չափով ուսում, խիստ կարգապահութեան մը տակ ...[նաեւ՝ իրենց] բնակարանի մէջ օգտագործող արհեստ մը, որպէսզի տղան իր ուսման հետ արհեստի մը տիրացած մտնէ կեանքի մէջ...»: Այս նախաձեռնութիւնը, որ «մեծապէս պիտի դիւրացնէր» որբանոցներուն վարչական գործը եւ «իրականապէս պատրաստած պիտի ըլլար որբերուն ապագան» կ'ընդունուի ԿՎԺին կողմէ, որ 9 Փետրուար 1920 թուակիրով, կը յայտնէ թէ «համախոհաբար որոշում կայացուց Ատանայի մէջ եւ կամ ուրիշ յարմար տեղ մը (Հաճըն այլընտրանք մըն էր - Ա.Տ.) մասնաւոր որբանոց մը եւս բանայ, ուր պիտի ընդունուին Միութեանս 13-16 տարեկան չափահաս որբերը միայն, եւ ուր գործնական պարզ ուսումէ մը գատ արհեստներ պիտի սորվին, առաջաւելն մինչեւ 18 տարեկան», եւ կը լծուի պաշտօնական դիմումներով յարմարագոյն տեղը եւ շէնքը ճշտելու աշխատանքին: Այսպէսով, ԿՎԺն կը պատրաստուի կազմել ՀԲԸՄ չորրորդ որբանոցը: Միաժամանակ, կը յառաջացնէ իր որբանոցներուն «Հրահանգ-Կանոնագիր»ը, առաւել կանոնադրելու համար անոնց ընթացքը եւ համադրելու գործունէութեանց միատարրութիւնը, հետեւողականութիւնը: Կազմակերպական յաջորդ քայլը կ'ըլլայ որբանոցները խնամակալ մարմիններով օժտելը: 24 Մարտ 1920 թուակիր նամակով ԿՎԺն կը դիմէ Ասատուրին, թէ՛ կազմուած են ՀԲԸՄ Մերսինի եւ Տէօրթ Եոլի որբանոցներուն խնամակալութիւնները (համապատասխանաբար վեց եւ հինգ անդամներով), բայց Հաճընին «դեռ չէ հաղորդուած...»: 9 Ապրիլ 1920 թուակիրով ԿՈՅը կը պատասխանէ իմիջիայլոց, թէ Հաճընի որբանոցին խնամակալութեան կազմութեան խնդիրներով կարելի չէ զբաղիլ «երկրին մէջ տիրող քաղաքական վիճակին պատճառով»: Աւելի ուշ, 18 Յունիս 1920 թուակիրով, ԿՈՅը Մալեգեանին կը յայտնէ թէ «շատոնց է տեղեկութիւն չեն կարող ստանալ» Հաճընի որբանոցէն, որուն խնդրով հաւանական է որ անոնք Ատանա տեղափոխուին:

³⁷ Նոյն, էջ 1:

բժշկական առաքելություն մը եւ անմիջական պէտքերու իրեղէններ, կը ծրագրուի նաեւ այրիանոց-արհեստարանոց մը հիմնել Հաճրն: Հաճրնի որբանոցն ու հիւանդանոցը կ'ապահովուին «բաւականաչափ պաշար եւ դրամ»ով: Որբանոցը կը գործէ իր ուժերուն համարժէք. ոչ մէկ մահացութեան պարագայ կ'արշանագրուի հոն մինչեւ 15 Մարտ 1920: Մայիս-Յունիս 1920ին ԿՎԺն 8 սնտուկ հանդերձեղէն կը դրկէ Հաճրնի որբանոցին, ապա՝ 15 հակ ու 3 սնտուկ եւս³⁸:

Սակայն ի տես զարգացող վրանգաւոր կացութեան եւ շեշտուող անորոշութեան՝ Հաճրնէն բարչրաստիճան պատուիրակություն մը (Սարաճեան Եպս., Պատ. Խաչատուրեան, Շմաւոն Փոստոյեան եւ թիկնապահներ³⁹) Փետրուար 22ին կ'ուղղուի Սիս ու Արանա՝ բարչրաշայնելու Հաճրնի կարիքները եւ ճշտելու յետագայ բայերը: Ծառալելու եւ առաւել աճելու ՀԲԸՄի ծրագրերը կը կասեցուին Մարաշի աղէտին, Կիլիկիոյ անապահովութեան ու «պաշարման վիճակին հետեւանքով, Հաճրնի որբանոցին մասին նորագոյն տեղեկություն ունենալ կարելի եղած» չըլլալուն պատճառով⁴⁰: ԿՎԺն հետեւեալ հեռագիրը կը յղէ Պէյրութ՝ Ֆրանսայի Բարչր Յանչնակապար Զօրավար Կուրոյի եւ Արանա՝ Ընդհ. Վարիշ, գնդապետ Պրեմոնի. «Տեսնելով Կիլիկիոյ մեր հայրենակիցներուն տագնապալի կացութիւնը՝ զոր նորագոյն յուժ մտահոգիչ տեղեկություններ կու գան հաստատել, կը խնդրենք հրամայել պաշտպանութեան ազդեցիկ միջոցներ, մասնաւորապէս Միութեանս Մերսինի, Տէօրթ-Եոյի եւ Հաճրնի որբանոցներուն եւ հիւանդանոցներուն համար»⁴¹:

³⁸ Միութիւն, Մայիս-Յունիս 1920, էջ 39, 87: Ըստ տուեալներու՝ առաջին 8 հակերը կը հասնին, կարելի չեղաւ հաստատել միւս հակերուն տեղ հասած ըլլալը:

³⁹ Թիկնապահութեամբ Յարութիւն Յովակիմեանի (ծնեալ Տագեւեան՝ Հաճրն, 1882-Չախլէ, 1954):

⁴⁰ «Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան Կեանքն ու Գործը. Կիլիկիոյ Ահազանգը», Միութիւն, Մարտ-Ապրիլ 1920, էջ 18: Հաճրնէն՝ ՀԲԸՄին յղած վերջին հեռագիրը կը կրէ 6 Մարտ 1920 թուականը (Պօղոսեան, էջ 458-61):

⁴¹ «Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան Կեանքն ու Գործը. Կիլիկիոյ Ահազանգը», էջ 1. Նաեւ՝ «Կիլիկիոյ սահմաններուն մէջ տիրող ներկայ անապահովութեան ու հաղորդակցութեան խզման պատճառաւ», կը յայտարարէ թէ բարերարներուն չի կրնար դրկել որբերու լուսանկար-վիճակացոյցները, բայց կը խոստանայ՝ առաջին իսկ առիթով փութալ գոհացում տալու (Միութիւն, Մայիս-Յունիս 1920, էջ 75):

Հաճրնի Պաշարումը և Հերոսամարտը

Վերադարձի, տեղաւորումի, վերաջինութեան և խաղաղ կեանքի վերսկսումի դժուարին միամեայ շրջանը (Մարտ 1919-Մարտ 1920) կը կասի Մարաշի աղէփին լուրով: Ան Հաճրնէն չորս օրուան հեռաւորութիւն ունէր - շուրջ 120 մղոն - և հաճրնցիք կը հաշուեն որ յաջորդ թիրախը իրենք են: Մարտ 1920ին Հաճրն կ'անցնի զինուորական կարգապահութեան: Շաբոնց արդէն, Էրզրումի մէջ, 23 Յուլիս 1919ի ժողովին⁴², Քեմալի ազգայնական շարժումը ոչնչացնող որոշում առեր էր փոքրամասնութիւններուն և պասանորդուած հայութեան դէմ:

3 Մարտ 1920ին քաղաքը կը վերածուի դժուարանցանելի տարածքի, կ'ընդհատի երթելեկը Սիսի հետ, Մարտ 13-15ին հեռագրաթելերը կը խզուին, տեղի կ'ունենայ Հաճրնի վրայ թրքական առաջին յարձակումը⁴³:

Կը կազմուին Հաճրնի Ինքնապաշտպանութեան Բարչրագոյն ժողովը (ՀԻԲԺ) և Վերին Հրամանադատութիւնը⁴⁴. վերջինիս կեդրոնը կը հաստատուի Հաճնոյ կեդրոնական Ս. Աստուածածին եկեղեցիին և կից Սահակ Մեսրոպեան Վարժարանին մէջ, ուր կը ծածանի ֆրանսական դրօշակը: Վարժարանի վարի յարկի նախկին թափերասրահ կը փոխադրուի ՀԲԸՄ հիւանդանոց-դեղարանը⁴⁵: Մարտ 8ին կը կատարուի զինուորական տողանցք: ՀԻԲԺն Հաճրնը կը բաժնէ լեռնային 4 գլխաւոր

⁴² Այնուհետեւ նաեւ 13 Սեպտեմբեր 1919ին, Սվազի մէջ:

⁴³ «Հաճնոյ Ինքնապաշտպանութիւնը», էջ 270, 286: Մինչեւ այդ նամակային հաղորդակցութիւնը կը գործէր երկշաբաթեայ դրութեամբ:

⁴⁴ Պողոսեան, էջ 624: Ինքնապաշտպանութեան մարմնին անդամներն էին Միհրան Մանիսաճեան, Յակոբ Չայճեան, Տիգրան Ճեւրտեան (այլ տեղ՝ Ճիւրճեան), Մեսրոպ Շիրտըմեան, Միհրան Գայեան, Ռուբէն Երկաթագործեան, Հաճի Տրդատեան, Գրիգոր Սըղընեան, Կարապետ Օղլուգեան, Պետրոս Թերզեան. զայն կը նախագահէր Սարաճեան սրբազան («Հաճնոյ Ինքնապաշտպանութիւնը», էջ 285. նաեւ՝ Շիրտըմեան, էջ 24):

⁴⁵ Տոքթ. Տիրան Թերզեան հիւանդապահութեան դասեր կ'աւանդէ հիւանդապահուիներուն, «նոյնիսկ կարելի եղած դեղերն ալ ինք կը պատրաստէ»: Հիւանդանոցի աշխատողներն էին Տիկ. Աննա (սեբաստացի, գլխաւոր հիւանդապահուի), Տիկ. Սիրուն Գրգեաշարեան, Օր. Եղիսաբէթ, Տիկ. Սարի Թերզեան, Տիկ. Կասիա, Վերգինէ և Թագուի Շիրտըմեան, Օր. Աննա Պերպերեան, Օր. Ազապի Պորճագեան Օր. Տիգրանուի, Տիկ. Պայճառ Գթթեան՝ դայեակ, (Թերզեան, էջ 292, 296): Հիւանդանոցին մէջ միաժամանակ կը խնամուէին 30 հիւանդներ: Ինքնապաշտպանութեան օրերուն հիւանդանոց բերուած վիրաւորներէն 130ը կը բուժուին, իսկ 30ը կը մահանայ (Թերզեան, էջ 300. նաեւ՝ Թաթուլեան, էջ 16):

դիրքերու.- ա) Տոլամաճ/Իժ (Քիրազ) Օլուք (հիւսիս-արեւելեան), Ա. վաշտ, բ) Տոնուզ-Սեքի (հիւսիս-արեւմտեան), Բ. վաշտ, գ) Ղորշուղազ/Չայրթ Պելէն/Կէօյնիկ (հարաւ-արեւելեան), Գ. վաշտ, դ) Չալղան (հարաւ-արեւմտեան), Դ. վաշտ: Կը կազմուի նաեւ շիաուր վաշտ մը՝ 60 շիաուրով, Պեպրոս Թերզեանի հրամանատարութեամբ⁴⁶: Կը կազմուին պարենատրման⁴⁷ եւ գրամման յանձնախումբեր, կը հաստատուի կրակմարի դրութիւն: Քաղաքի բնակչութիւնը կը բաժնուի երեք խումբի.- ա) երիտասարդութիւնը՝ 16-50 տարեկան տղամարդիկ (շուրջ 600 հոգի, մինչ Հաճընի մէջ պատրաստ զէնքերուն թիւը 500ը չէր անցներ) զօրակոչի կ'ենթարկուին եւ կը լծուին ինքնապաշտպանութեան, կը կազմուին յառաջապահ եւ պահեստի խումբեր, բ) երկրորդ խումբը՝ 8-12 տարեկան փոքրեր, զինամթերք փոխադրողներն եւ սուրհանդակներն էին, գ) երրորդ խումբը երէցներն էին, որոնք խրամներ կը փորէին եւ յարչակումներու արեւն «հոռոտա՛, հոռոտա՛» կը պոռային, իրենց կ'ընկերանային նաեւ զէնք չունեցող պարանիներ: Իգական սեռը կը բաժնուի չորս խումբի.- ա) դիրքերուն վրայ մարտնչողներ, բ) դեռապի հարսեր եւ օրիորդներ, որոնք կիւկիմներով ջուր կը մաքակարարէին դիրքերուն, գ) երրորդ խումբը հիւանդանոցին կը ծառայէր, դ) չորրորդ խումբը երէցներն էին, որոնք արցունքոյ աղօթքներով հաց կը թխէին⁴⁸:

Հրամանատարական կեդրոնատեղիին խուցերէն մին կը վերածուի դերչակապան, ուրիշ մը՝ զինարանի, ուր կը նորոգուէին զէնքերը, չայայթած ոռմբերուն նիւթերը կ'օգտագործուէին եւ օրական 5-600 փամփուշտ կը պատրաստուէր⁴⁹: Կը պատրաստուէր նաեւ վառօդ: Ջինարանի մարդիկ՝ գլխատրութեամբ ուսուցիչ, խարբերդցի քիմագէտ Պաղտոյեանի, Համարշում Ապրեանի եւ Տիգրան Աճէմեանի, թնդանօթ շինելու անյաջող փորչէ մը ետք, կը յաջողին ականներ ու պայթուցիկներ սարքել⁵⁰:

⁴⁶ Շիրտըմեան, էջ 26:
⁴⁷ Պարենատրման յանձնախումբը կ'աշխատցնէ երկու փուռ, գիշերանց: Ան վերահսկողութեան տակ առած էր Կերթմէնեանի, Սօղնալեանի, Էփիսանեանի եւ Թերզեանի ցորենի ամբարները եւ մինչեւ Յունիսի վերջ՝ պահեստի պաշարներուն սպառումը, կը տնօրինէ պարենատրումը Հաճընին, որմէ ետք «ամէն մարդ իր բախտին ձգուեցաւ» ու ծայր կ'առնէ սովը (Թերզեան, էջ 290-1):
⁴⁸ «Հաճնոյ Ինքնապաշտպանութիւնը», էջ 269. նաեւ՝ Թերզեան, էջ 217, 295-6. նաեւ՝ Պօղոսեան, էջ 625, 628, 653:
⁴⁹ Մէզի չորցուքը կը գործածուէր աղ-վառօղի համար, թութէն կը պատրաստուէր արուեստական ալքոլ, իսկ անկողիներուն վերմակները կ'օգտագործուէին իբրեւ բամպակ:
⁵⁰ Փորձերէն մէկուն ընթացքին Պաղտոյեան ծանրօրէն կը վիրատրուի եւ կը կորսնցնէ աչքերէն մին, իսկ առողջանալէ ետք կը շարունակէ

Մարտի կէսերուն կը վճռուի դիմադրութեան քան թէ նահանջի դիմելու որոշումը: Մարտ 16ին Հաճնոյ երկնակամարին կ'երեւի ֆրանսական առաջին սաւառնակը, իսկ յաջորդ օրը թուրքեր վերջնագիր կու տան Հաճընի: Ֆրանսական երկրորդ սաւառնակը Հաճնոյ երկնակամարին կ'երեւի Մարտ 28ին, որուն կը յաջորդեն ծանր մարտերը: Ապրիլ 6-7ին մեծ յարշակումի կ'ենթարկուի Հաճընը. միառժամանակ ետք կը լքուին լեռնային դիրքերը: Նիժի որբանոցին շրջանը կ'անցնի թրքական հակակշռի տակ: Չափահաս 20-40 որբանոցայիններ, իրենց ուսուցիչ Պաղտոյեանի հրամանատարութեամբ ամիս մը պաշտպանուելէ ետք, Քիրազ լեռան վրայ զերեզուած թնդանօթին ումբակոծումներուն եւ զօրքի յարշակումներուն դիմաց, Ապրիլի կէսերուն կը լքեն լեռնային դիրքերէն վերջինը՝ Ս. Յակոբայ վանքը, ՀԲԼՄի իրենց որբանոցը ու կ'անցնին քաղաքամէջ⁵¹, մինչ կրտսեր որբանոցայինները արդէն հեռացուած էին անկէ:

Դիմադրականները կը խրամատուին քաղաքի մերձակայ դիրքերուն: Արեւմուտք, Քանլը Փագարի հրամանատար կը նշանակուի կամաւոր Վահան Աթունեան, Կելիկի՝ կամաւոր Արշակ Սահակեան⁵², Քոփուշ թաղի՝ Կարապետ Օղլուգեան, հարաւ՝ Եագը թաղի՝ Մկրտիչ (Մկր) Մանասէեան, Ս. Յակոբայ կամուրջի՝ Կիրակոս Տէր Կիրակոսեան, Մանրսիսանէէն մինչեւ Ս. Սարգիսի կամուրջ՝ Մեսրոպ Շիրտըմեան⁵³: Պաշարման շղթան հազիւ 20 քայլ հեռու էր հայկական կարգ մը դիրքերէն⁵⁴:

Ապրիլ 15ին՝ թուրքեր հաշտութեան առաջարկ կը ներկայացնեն⁵⁵, իսկ Ապրիլ 30ին ծանր կը ումբակոծեն

զինարանի իր գործունէութիւնը (Թերզեան, էջ 301-3):

⁵¹ Որոնց շարքին Գեորգ Կիզիրեան, Աբրահամ Տագէտեան: Անոնք ամրացած էին վանքի երեք դիրքերու մէջ՝ դպրոցը, վերնատունը, եւ հիսսային դիրքերը: Անոնք ոչ միայն կը դիմադրէին, այլեւ Կելիկի թէ Քանլը Փագարի վրայ յարձակումի պարագային թիկունքէն կրակ կը բանային թուրքերուն վրայ («Հաճընի Մեր Կտրիճ Որբերը», *Միութիւն*, Նոյ.-Դեկտ. 1920, էջ 93. նաեւ՝ Թերզեան, էջ 283, 284, 286. նաեւ՝ Պողոսեան, էջ 659):

⁵² Շիրտըմեան կը միացնէ այս երկուքը իբրեւ՝ «հիսսի եւ հիսսի-արեւելք (Քոփուշ թաղ)» նշելով երկու վաշտապետ՝ Կարապետ Օղլուգեան եւ Արշակ Սահակեան (Շիրտըմեան, էջ 24):

⁵³ Թերզեան, էջ 274. նաեւ՝ Շիրտըմեան, էջ 24-26:

⁵⁴ Ասիկա անկարելի կը դարձնէ անցքը՝ դէպի քաղաքի շրջակայ պարտէզներն ու այգիները՝ խոտ հաւաքելու:

⁵⁵ Որ անելի համազօր էր զինաթափում-յանձնուելու պահանջքի: Նման առաջարկ մը եղած էր Մարտ 12ին (Շիրտըմեան, էջ 39-40): Յունիսին, մետասաներորդ ժամուն, կը ձախողի նաեւ Տորթ. Տատի խաղաղութիւն հաստատելու փորձը:

Կելիկ թաղամասը: Մայիս 8ին հաճընցիք կը գործեն առաջին հակայարչակույմը՝ 300 դիմադրականներով⁵⁶: Թուրքերը նոր թարմ ուժեր բերելով Մայիս 10ին 105մլ. թնդանօթով կը սկսին աւերել արդէն իսկ աւերակուած Հաճընը: Ռամապանի սկսնաւորումով խլրպում կը սկսի պաշարողներուն մէջ. պարզ ու Կրէպ գիւղացիք, որ զօրքին մեծամասնութիւնը կը կազմէին, կ'ուզեն պայրամը Կրունը Կրունը եւ այդ պարճառով ալ բաղաքին վրայ գիշերային յարչակումները կը շարունան: Սակայն Մայիսի աւարտին թուրքերու 16 ծանր յարչակումները ապարդիւն կ'անցնին⁵⁷: Քլարք՝ Հաճընը «մեռեալ բաղաքի» կը նմանցնէ. «երբեմն ծուխ մը կը բարչրանայ Կրունիքէ մը, բայց պարզ աչքով կամ հեռադիտակով շարժող մարդ չենք տեսներ: Կը տեսնենք խրամապանները եւ կ'ենթադրենք որ մարդիկ խլուրդի պէս, ընդյապակ անցած են»:

25 Մայիսին Սիւէն Հաճըն հասած լրաբեր Ասապուր Սաչեան, Սիս վերադարչին սկանապես կ'ըլլայ բաղաքի հայութեան պարպումին⁵⁸: 1 Յունիսին կը ջարդուի Վահկայի հայութիւնը: 8-9 Յունիսին դիմադրականները մասնակի յարչակողականով կը գրաւեն Քրպէպի որբանոցը, եւ միքանի օր դիմադրելէ ետք որբանոցայինները կը փոխադրեն Մանրսիսանէ, նաեւ՝ ուրեպարի պաշարը⁵⁹: 18 Յունիսին Ճեպէճեան կը վիրաւորուի եւ այնուհետեւ կը գամուի անկողնին. Արամ Կայծակ կը նշմանակուի գործադիր հրամանապար: Յուլիս 1920ի սկիզբները միլլի չեթէական խումբեր կը սկսին երելիլ Հաճընի լեռները, մինչ Յուլիսին ինկած էր Շարը⁶⁰: Ասոր կը յաջորդէ Հաճընի վրայ ամէնաբառուն յարչակումը որ ետ կը

⁵⁶ Թերզեան, էջ 330:

⁵⁷ 1920ի առաջին հինգ ամիսներուն ֆրանսացիք կորսնցուցեր էին Մարաշը, Պոզանթըն, Ուրֆան, իսկ Այնթապը պաշարուած էր:

⁵⁸ Սիսի պարպումով Հաճընի նահանջը գրեթէ անկարելի կը դառնար: Ֆրանսացիք՝ քեմալականներու յարճակումներուն հետեանքով ծանր, դժուարին պայմաններու մատնուած, ենթարկուելով քեմալական ճնշումներու, անոնց հետ 30 Մայիս 1920ին կը ստորագրեն զինադադար, որով 2 Յունիս 1920ին կը պարպեն Սիսը՝ ֆրանսացի զինորդներէն եւ հայութենէն: Ատկէ ընդամէնը ամիս մը առաջ, 28 Ապրիլին, Սուրիոյ եւ Լիբանանի հոգատարումը պաշտօնապէս յանձնուած էր Ֆրանսայի...: 14 Սեպտեմբերին պաշտօնափոխութեան ենթարկուելով Գնդ. Պրեմոն պիտի կանչուէր Ֆրանսա («Հաճընի հնքանապտպանութիւնը», էջ 282): Աելի ետք, 20 Հոկտեմբեր 1921ի թուրք-ֆրանսական համաձայնութեամբ պիտի կասէր Կիլիկեան հայկական պետութեան երազը:

⁵⁹ Պողոսեան, էջ 671: Թրքական վերագրաւումէն ետք (13 Յունիս), որբանոց մնացած միսիոնարական անձնակազմը (վեց հոգի՝ Էպի ամուր, Էտիք Քոլոյ, Ալիս Քլարք, Սիս Պրետըմաս, Միս Սուփըր), կը տարուի Թալաս, ու Սվազի եւ Թոքաթի վրայով՝ Սամսոն, եւ Պոլիս կը հասնի 3 Յուլիսին, իսկ Քրտէտի մէջ ասոնց վստահուած երկու թուրք պարմանուիները ճամկան կը յանձնուին իրենց ազգականներուն («Հաճընի հնքանապտպանութիւնը», էջ 277. նաեւ՝ Շիրտըմեան, էջ 62, 70, 71. նաեւ՝ Քլարք):

մղուի: Յուլիսի վերջաւորութեան անհամերաշխութիւնը կը շեշտուի Հաճնոյ քաղաքական եւ զինուորական հրամանաւարութեանց միջեւ: Չալեան իզուր կը ջանայ փարհամոզել զինուորական հրամանաւարութիւնը՝ Հաճրնի բնակչութիւնը տեղափոխելու Արանա⁶¹: Օգոստոս 5-6ին տեղի կ'ունենայ դիմադրականներու երկրորդ հակայարշակողականը⁶²: Օգոստոս 20ին Հաճրն կը հասնին 3 սուրհանդակներ որոնք կ'աւելնէն շուրջ 1500 կամաւորներու Ախարձայի (Արանայի մօտ) մէջ հաւաքուիլը՝ Հաճրնի օգնութեան հասնելու⁶³: Օգոստոսի երրորդ փասնօրեակին Չալեան դարչեալ կ'առաջարկէ նահանջել Արանա, մինչ զինուորական թելը կը հակառակի⁶⁴: Սեպտեմբեր 18ի գիշերը՝ դիմադրականներու երրորդ հակայարշակողականը՝ Ռումլու եւ Կիւզելլիմ գիւղերուն վրայ, դարչեալ կ'արդիւնաւորուի ուրեւորի պաշարի աւարով, որ նոյնպէս կը սպառի⁶⁵: Ճիշդ է, որ պաշարուածները ջուրի փազնապ չունէին, բայց Յուլիսին արդէն մորթուած էին

⁶⁰ Ծարը պաշարման տակ առնուած էր Փետրուար 23ին («Հաճնոյ Ինքնապաշտպանութիւնը», էջ 277, 286):

⁶¹ Զինակիր երիտասարդներ պիտի պաշարէին երկու լեռները, իսկ միւս կողմէ պիտի պաշտպանէին ժողովուրդը եւ թնդանօթը (Թաթուլեան, էջ 17): Աւելի առաջ եւս, Մարտ 10ի շուրջ, մշակուած էր ծրագիր՝ Հաճնոյ բնակչութիւնը Սիս փոխադրելու: Հաճնոյ զինաւորներու պաշտպանութեամբ բնակչութիւնը պիտի հասցուէր Աք Քայա, ուր ֆրանսացի զինուորներ պիտի հասնէին Սիսէն եւ ժողովուրդը ապահով հասցուէր Սիս: Հաճրնէն Սիս այս երթը կ'ընար երկու-երեք օր տեւել (Շխրտըմեան, էջ 34-35): Նահանջի նման ծրագիր մըն էր Հաճրնէն զինաւորներու խումբով մը Ֆեքէ-Վահկան գրաւելէ ետք Հաճրնի մնացեալ զինաւորներն ու ժողովուրդը դուրս բերելով հասցնել Վահկա, ապա եւ զերեկարեալ՝ թուրք ֆէքեցիք նահանջող ժողովուրդին մէջ իբրեւ պատանդ առնելով յառաջանալ մինչեւ Ատանայի եզերքը, ուր ազատ արձակուէին պատանդ թուրքերը (Շխրտըմեան, էջ 146):

⁶² Չեչպէկի (Տոնուզ Սեքի) ուղղութեամբ յարձակելով, դիմադրականները կը գրաւեն թնդանօթ մը եւ 450 արկ, որոնք կը բերուին հրամանատարական կեդրոն: Կը բերուի նաեւ ութ օրուան պաշար («Հաճնոյ Ինքնապաշտպանութիւնը», էջ 270-71):

⁶³ Իրականութեան մէջ, այս թիւին միայն մէկ-երրորդը կը հաւաքուի հոն: Ծրագիրը ամբողջութեամբ կը ձախողի: 22 Սեպտեմբերին կամաւորները կը պաշարուին ֆրանսական զօրքին կողմէ, կը զինաթափուին ու ոմանք կ'աքսորուին Իզմիր (Թերզեան, էջ 391. նաեւ՝ «Հաճնոյ Ինքնապաշտպանութիւնը», էջ 279): Ասիկա երկրորդ փորձն էր՝ Հաճրնի օգնութեան փոյթալու: Արդարեւ 16-30 Մարտին, 200 մարտիկներու առաջին խումբ մը (հրամանատարութեամբ Ճիմ Չանգալեանի եւ Արմաղաւեանի), ապա երկրորդ խումբ մը (առաջնորդութեամբ Պօղոս Թուրսարգիսեանի), երրորդ խումբ մը (հրամանատարութեամբ Կարապետ Կէտեղիքեանի, խումբին միացած էր նաեւ Ռուբէն Հերեան), եւ հուսկ չորրորդ խումբ մը (Մկրտիչ Եփրեմեանի եւ Վահան Փորթուգալեանի առաջնորդութեամբ) կը մեկնի Սիսիս, բայց անաւարտ կը մնայ այս ծրագիրը («Հաճնոյ Ինքնապաշտպանութիւնը», էջ 270-71):

⁶⁴ 27 Օգոստոսին Ատանա կ'իմացուի Սեւրի Դաշնագրին ստորագրման մասին («Հաճնոյ Ինքնապաշտպանութիւնը», էջ 281):

⁶⁵ Րումլուն քաղաքին հիպիսային ամէնամօտ գիւղն էր: Աւարը՝ 25 կառք ցորեն, 500 այծ ու ոչխար եւ 60 ձի, Հաճրն կը բերուի, բայց Կիւզելլիմի 1000 զոմէշ աւարը Հաճրն բերուելու առեւն կը պաշարուի եւ հաճրնցիք կը ստիպուին լքել զայն: Դարձեալ փորձեր կ'ըլլան՝ դէպի հարաւ, Կիւրլէշէի վրայ յարձակելու, բայց անձրեւը կը խանգարէ («Հաճնոյ Ինքնապաշտպանութիւնը», էջ 270-71, 288):

Հաճրնի բոլոր կենդանիները՝ գրասպաններ, չիեր-էշեր-ջորիներ, շուն ու կապուներ, նոյնիսկ հիւանդներուն կաթ հայթայթելու վերապահուած միքանի կովերը...: Սովը շարունակ վարիս դարձուցած էր պաշարուածները. «սովահար ժողովուրդը խաշած խոտ ուրելէն դակիացած էր ...Սովը յառաջ կը փանէր բնաջնջումի դիւային ծրագիրը», կերուած էին կենդանիներուն մորթերն ու կաշիները, ծառերու փերետներն ու կեղեւները. յիրաւի «միջոցները սպառած էին»⁶⁶, բայց - զարմանալիօրէն, ըստ յուշերու - զոհերուն թիւը չէր անցած 200ը:

Հաճրնի Անկումը եւ Կոտորածը. Վերապրողներ, Սգահանդէսներ, Վերականգնում

Հոկտեմբեր 14ին, փարբեր կողմերէ երկօրեայ հետախուզումէ վերադարձող հաճրնցիներ կը հաւասարեն հակառակորդին մեծ պարտաւարութիւնը: Առաջը առնելու եւ խանգարելու համար թրքական յարձակումը՝ կը կազմուին յարձակման ջոկատներ, որոնք սակայն առաջին իսկ իրենց բայլերուն նկատուելով՝ կը ստիպուին նահանջել: Ասոր կը յաջորդէ Ռուբաթ, 15 Հոկտեմբերի թրքական ծանր, անընդհար ումբակոծումը որ կը սկսի կանուխ եւ կ'երկարի ամբողջ օրը: Աւելի քան 200 ումբերէն առաջինները կ'իյնան հրամանադատական կեդրոնին վրայ, կը սպանուին յառաջապահ դիրքերու մարտիկները, կը նահապարակուի 175 մարտիկ, «Մուկի ճամփաներ»ը՝ ռազմական հաղորդակցման խրամները, կը քանդուին եւ հաղորդակցութեան ցանցը կը փափալի: Թուրքեր կը խուժեն Բանլը Փագարէն, բայց առանձնակի եւ կարգ մը ներքին դիրքերու դիմադրութիւնը կը շարունակուի:

Խուճապահար ժողովուրդը կը դիմէ փախուստի դէպի հարաւ՝ Արանայի ուղղութեամբ, բայց քաղաքին այդ ելքին դիրքաւորուած թրքական արագահարուածները կը հնչեն զանոնք, այն աստիճան որ ճամփան անանցանելի կը դառնայ: Շարքեր ինքնասպանութիւն կը գործեն: Գիշերը թուրքերը կը հասնին Ս. Աստուածածնի հրամանադատական կեդրոնը, ուր հասարակուած հիւանդանոցին 140 վիրաւորները եւ հոն ապաստանած փոքր որբերը կը ներեն անդունդը: Ժողովուրդէն մաս մը - շուրջ հազար հոգի - հետելելով Արամ Կայծակի մարտիկներուն, կ'ելլէ Տոնուզ Աքի, որ կը պաշարուի Հոկտեմբեր 16ին: Այդ օր, ամբողջ ցերեկը հեղեղանման կ'անչրելէ: Գիշերը կը սկսի հաճրնցի մնացորդացին, անզէն զանգուածին նախճիրը, լեռներու վրայ փախստականներու հայրորութիւնը: Կը ջարդուին նաեւ ՀԲՄԻ Հաճրնի

⁶⁶ «Հաճրնի Ինքնապաշտպանութիւնը», էջ 288. նաեւ՝ Թաթուկեան, էջ 17, 18:

